Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի

Հարցաշարերի պատասխաններ

X դասարան

1. Գրիգոր Նարեկացին մեր գրականության ամենաբարձր թռիչքներից է, որ սովորեցնում է «տառապանքով ինքն իրեն զտելու, ինքն իրենից բարձրանալու, ոգու և խղճի ամենաբարձր ոլորտներին առնչվելու» դժվարին արվեստը: Նարեկա մեծ ճգնավորը իր տիեզերական հանճարով բացահայտեց հայ ժողովրդի հարատևության գաղտնիքը:
Նա դարձավ Հայաստանի վերածնության հզոր փողհարը, համարձակորեն ճեղքեց խավարը՝ լուսավորելով ամեն ինչ ու ամենքին:
Նարեկացին առաջինն էր, որ հայ բանաստեղծությունը մոտեցրեց իրական կյանքին, թեև այլաբանորեն, սակայն պատկերեց բնության անսպառ հրաշքներն ու մարդուն՝ իբրև Աստծո ստեղծած էակի, գովերգեց կնոջ գեղեցկությունը՝ Աստվածամոր կերպարով: «Մեղեդի ծննդյան» տաղում նա, հանձին Աստվածամոր, գովերգում է կենսալից, թրթռուն . «այգաբացի լուսացնցող շող» հիշեցնող կնոջը, որի «այտերից դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր են թափվում» , որի «գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում հուզավարար կենսատու սեր», որի ծով աչքերում արեգակներ են փայլում: Սա անմնացորդ սիրո ու հարատև գեղեցկության օրհներգ է, և այս երգը երգում է մեկը, ով երբեք չճաշակեց սիրո վայելքը: Այս կնոջ քայլերից «շող է կաթում», նա «քայլում է մարգարտաշար» , և մենք Մարիամ Աստվածածնի մաքրամաքուր սիրո մեջ տեսնում ենք իրական կնոջը՝ իր ողջ հմայքով, իր «թիկնեթեկին» հպարտ քայլվածքով՝ քաջատեղյակ իր գեղեցկությանն ու հմայքին: Այլաբանությունը կարծես իր տեղը ոիջում է գեղեցիկ իրականութանը, որ շնչում է սիրով ու գեղեցկությամբ:
Շրջասույթներ՝ Մեծ աղոթասաց, անհասանելի հորիզոն, ճշմարտության վարդապետ, շնչական մատյան:

2.Կոմս Էմմանուելը Միքայել Նալբանդյանն է՝ ազատության երգիչը: Կոմս Էմմանուելը «Մեռելահարցուկ» վեպի գլխավոր հերոսն է, որը ակտիվ, գործունյա, անհաշտ բնավորություն է: Կոմս Էմմանուել-Նալբանդյանը իր կյանքի իմաստը պայքարի մեջ է գտնում , համարձակորեն ձաղկում է հոգևոր դասին ու բուրժուական հարաբերությունների անմարդկային էությունը: Վեպը լույս է տեսել «Հյուսիսափայլ» ամսագրում, 1859-ին: Հետագայում Նալբանդյանը գրում է իր նշանավոր «Հիշատակարանը», որը հիմք դրեց գեղարվեստական հրապարակախոսությանը: «Կոմս Էմմանուելի հիշատակարանը» գեղարվեստական հրապարակախոսության անուրանալի նվաճումներից է և մշտահիմա ու մշտամնա արժեքներից:

Նալբանդյանը մեծ հեղափոխական է, ժողովրդավար ու ժողովրդասեր, նրա կյանքը համակ հրդեհ էր, որտեղ այրվում էին ժամանակի բոլոր հրատապ խնդիրները. նա առաջիններից էր, որ համարձակորեն փաստեց , որ ժողովրդի հետամնացության ու թշվառության ամենամեծ պատճառը տգիտությունն է և հաստատեց , որ աղքատության, ստրկության մեջ չ կա և չի կարող լինել լուսավորություն:
Շրջասույթը՝ Ազատության երգիչ, մնացյալը՝ մասնակիցը:

3. Սկյուտարի սոխակը վաղամեռիկ հանճար Պետրոս Դուրյանն է, որին Պարույր Սևակն անվանել է «Մեր քնարերգության Վահագնը»: «Պետրոս Դուրյա՛ն....սա աշխարհ չպատկերեց: Եվ աշխարհ չստեղծեց: Սա բացեց իր աշխարհը, որ իրենից հետո կոչվեց ու կոչվելու է իր իսկ անունով՝ Դուրյանական»:
Պետրոս Դուրյանի աշխարհում «Լճակ» կա, կա «բույլ մը նայվածք», «փունջ մը ժպիտ», «դժոխք մ՝անեծք», «գիշեր մը սուգ»: Կա նաև հրաժեշտի ցավ ու զայրույթ, և կա աղաղակ ու աղերս՝ «Օ՛հ, կայծ տվեք ինձ կայծ,
Կայծ տվեք ապրիմ....»:

Սակայն դաժան էր ճակատագիրը. անողոք հյուծախտը՝բանաստեղծական կոչվող հիվանդությունը, սողոսկել էր նրա մարմինը և հյուծում էր անխնա: 20-ամյա պատանին սեր չճաշակեց, գրական ճանաչում չունեցավ, տպագրված չտեսավ իր հրաշալի բանաստեղծությունները, բայց մինչև մրուրը ճաշակեց հուսահատության ու մենության դառնություն ը: Բերված տողը Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունից է, որը նա գրել է մահվան մահճում՝ մահից երկու օր առաջ: Նա համարձակորեն «Ելավ աստղերու սանդուղքն անալի(աստիճան չունեցող)», դարձավ այն անմարելի աստղը, որ արդեն մեկուկես դար ժպտում է մեզ: Իսկ որ Դուրյանը զայրույթով պոռթկալու ամեն իրավունքն ուներ ,միանգամայն ընդունելի ու հասկանալի է : Այս բանաստեղծության մեջ ընթերցողը զգում է բանաստեղծի հոգու ալեկոծումը, տառապանքը, մահվան սպառնալիքը և կյանքի ծարավը: Սա փշրված սրտի վերջին ճիչն է, որ պոռթկում է առ Աստված: Այն «փրփրում մը դժոխքի նման» հրաբխային ժայթքում է, որ անեծք է դառնում, որովհետև Աստված չի «տեսնում» բանաստեղծի տառապանքը, անողոք է Աստված ,և Դուրյանը ըմբոստանում է նրա դեմ՝ «Աստծո ծաղրն է աշխարհ ալ արդեն»:

4.«Հայաստանի վերքի երգիչ»-ը՝ լուսապայծառ Աբովյանը, իր գլուխգործոցը տպագրված չտեսավ. այն լույս տեսավ նրա ողբերգական կորստից 10-տարի հետո և հրդեհեց ընթերցասեր հանրության սրտերն ու հոգին: Ինչպես հեղինակն էր «Էրվում, խորովվում»՝ տեսնելով հայ մանկան անտարբերությունը հայոց պատմության , հայ գրականության նկատմամբ, այնպես էլ այսօր և միշտ հայ ընթերցողը նրա հետ զգում ու ապրում է այդ դառն իրողության հետևանքները:

Հայ նոր գրականության հիմնադիր, աշխարհաբարի անխոնջ ջատագով ու Գրապայքարի հաղթող Աբովյանի վեպը հայ նոր գրականության հիմնաքարն ու անձնագիրն է:Այն մշտատև դասագիրք է՝ հայրենապաշտության, լեզվասիրության, ժողովրդասիրության , բնապաշտության:

Խաչատուր Աբովյանը լուսավորության առաքյալն էր, որ հանուն իր ազգակիցների, հանուն ազատության՝ այրելով այրվեց իր հայրենիքի բախտով : ««Վերք Հայաստանի»-ն մեր զարթոնքի հոյակապ էպոսն է, անձնազոհ կռիվը, մարտնչումը», իրավամբ նկատել է Ավետիք Իսահակյանը: Մեծագույն հայրենասերի տված դասերին մենք պետք է անշեղորեն հետևենք՝ սիրել, փայփայել մայրենի լեզուն՝ «տասը լեզու սովորեք, մեր լեզուն, մեր հավատը ղայիմ պահեցեք», սիրենք մեզ ծնող ժողովրդին, անձնուրաց պայքարել հայրենիքի ազատության ու հավերժության համար:

Վեպի ենթավերնագիրը՝ «Ողբ հայրենասիրի», ամբողջությամբ բացահայտում է Աբովյանի անեզր հայրենասիրությունը: «Վերք Հայաստանի» վեպը երբեք չի կորցնելու իր արդիականությունը, քանի դեռ Հայաստան աշխարհի ազատության զահգերը չեն ողողանջել «Դրախտավայր Հայաստանի» անկախ պետականության ու անխախտելի սահմանների վերջնական հաղթանակը:

Աբովյանը գերեզման չունի. նրա գերեզմանը բովանդակ Հայաստանի ամեն անկյունում է, ամեն ծերպում:Բայց հանճարեղ Չարենցը նրան տարել է «լյառն Մասիս»՝ այնտեղ գտնելու հավերժական հանգիստ, այնտեղից նայելու իր Քանաքեռին ու Երևանին, այնտեղ բարձրացնելու հայի ազատության դրոշը:

Չարենցի «Դեպի լյառն Մասիս» պոեմն է Աբովյանի ամենամեծ հուշարձանը: «Խանդավառության , հերոսական գործերի մղում, և ճշմարտություն է , որ Աղասին իր կապուտակ ձիով՝ դոփելով , փայլատակելով ու զրնգալով, քառասմբակ անցել է ժողովրդի հոգու միջով» :««Վերք Հայաստանին» գիրք չէ, դա հոգուց պոռթկած , սրտի խորքերից շղթայազերծված մրրկարշավ է, հրաբուխ: Ինչպես 1840-ին դարերով լռած Մասիսը պոռթկած կրակ ու բոց , և հեղեղեց , և շարժեց Հայոց աշխարհը, այնպես էլ նույն թվին՝ Աբովյանի մեծ սիրտը...հեղեղեց և կրակ ու բոց որոտաց, և շարժեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ և կայծակի նման ճեղքեց ապագայի մութն ու մռայլը, ցույց տվեց հայ ժողովրդի փրկության ուղին՝ հայ ժողովրդի ազատագրման-անկախության ուղին՝ պահպանումն ու պաշտամունքը մայրենի քաղցր ու մեծասքանչ լեզվի:

Զարմանալի՜, անհունորեն զարմանալի հրաշք-երևույթ է «Վերք Հայաստանին»: Քարաշատ Հայաստանը նրա վրա քար չդրեց, որովհետև նա չի մեռել. նա կմեռնի միայն հայ ժողովրդի հետ, իսկ հայ ժողովուրդը հավիտենապես անմահ է»:

Ավետիք Իսահակյան

Գնահատման չափանիշներ

X դասարան

1-ին հարց՝ ենթահարց 1. 3 միավոր,
ենթահարց 2. 1 միավոր,
ենթահարց 3. 1 միավոր:

2-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 1,5 միավոր,
ենթահարց 3. 2 միավոր,
ենթահարց 4. 0,5 միավոր:

3-րդ հարց՝ ենթահարց 1. 0,5 միավոր,
ենթահարց 2. 0,5 միավոր,
ենթահարց 3. 3 միավոր,
ենթահարց 4. 1 միավոր:

4-րդ հարց՝ ենթահարց 1. 3 միավոր,
ենթահարց 2. 1 միավոր,
ենթահարց 3. 1 միավոր:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան